ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԶԵԿՈՒՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 25-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Մայիս 2001թ., Երևան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1991 թ. անկախության նվաճումից ի վեր Հայաստանը որդեգրել է համաշխարհային ու եվրոպական կառույցներին ինտեգրվելու և քաղաքակիրթ պետությունների հանրության լիիրավ անդամ դառնալու քաղաքականություն, որի համար անհրաժեշտ նախապայմաններից է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Դարձնելով Հայաստանում ժողովրդավարության հետագա զարգացման ու մարդու իրավունքների պաշտպանության հարցերը ներքին և արտաքին քաղաքականության առաջնային խնդիրներից մեկը՝ Հանրապետության իշխանությունները նշանակալի ջանքեր են գործադրում մարդու իրավունքների պաշտպանության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների ձևավորման համար: Հայաստանի Հանրապետությունը, գիտակցելով միջազգային հարաբերությունների զարգացման ոլորտում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ապահովման գործում միջազգային համագործակցության խորացման դերն ու անհրաժեշտությունը, իր ինքնիշխանության ուժով պարտավորված է զգում այդ ոլորտի ամբողջական զարգացման և պարտավորությունների բարեխիղճ կատարման հարցում:

Հայաստանի Հանրապետությունը Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան ստորագրել է 1997 թվականի հուլիսի 25-ին՝ վերջինիս 27-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Նախարարների կոմիտեի հրավերով, երբ դեռևս, Եվրոպայի Խորհրդի անդամ չէր հանդիսանում:

Կոնվենցիան վավերացվել է 1998 թվականի փետրվարի 17-ին, իսկ վավերագիրը ի պահ է հանձնվել Եվրոպայի Խորհրդի քարտուղարություն 1998թ. հուլիսի 20-ին: Հայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 1-ին: Համաձայն Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետությունը պետք է սույն զեկույցը ներկայացներ 1 տարի հետո՝ 1999 թվականի նոյեմբերի 1-ին: Սակայն զեկույցը կազմելու համար որոշակի էական նշանակություն ունեցող հանգամանքների պատճառով այն ներկայացվում է ուշացումով: Դրանք են.

1. Քանի որ վերջին անգամ Հայաստանի Հանրապետությունում մարդահամար անց էր կացվել 1989 թվականին, ապա հաջորդ մարդահամարն ըստ ընդունված պրակտիկայի պետք է անցկացվեր 1999 թվականին: Սակայն համաձայն Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 1999 թվականին ընդունված «Մարդահամարի մասին» օրենքի, նոր մարդահամարի անցկացումը նախատեսվեց 2001 թվականին: Մարդահամարի կարևորությունը զեկույցի համար կայանում է նրանում, որ, մարդահամարի խնդիրը լինելով ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների մշակման, ժողովրդագրական և սոցիալական հետազոտությունների, բնակչության թվաքանակի և կազմի, ընթացիկ հաշվառման ու կանխատեսումների նպատակով բնակչության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունների ստացումը, ավելի նպատակահարմար կլիներ նոր մարդահամարի տվյալների օգտագործումը զեկույցում:

2. Մարդահամարի տվյալների բացակայության պարագայում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հավաստի տեղեկություններ հնարավոր էր ձեռք բերել ազգային փոքրամասնությունների կազմակերպություններից, որոնք գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարությունում: Սակայն այստեղ ևս կար պրոբլեմ «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ ԱԺ-ի կողմից 17.06.98 թ. ընդունված օրենքի 6-րդ հոդվածի հետ կապված, որը սահմանում է մինչև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելը ստեղծված և քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխով նախատեսված կազմակերպահրավական ձև ունեցող իրավաբանական անձանց մինչև 2001 թվականի հունվարի 1-ը հիմնադիր փաստաթղթերի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխի նորմերի պահանջներին համապատասխանեցում և վերագրանցման պահանջ: Այս փաստը ինքնին մեր ուղղությամբ անպայման առընչվում է Ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների հարցին:

Սույն զեկույցը կազմվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից՝ համապատասխան նախարարությունների և գործակալությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ հաշվի առնելով ինչպես համապատասխան գերատեսչությունների, այնպես էլ համապատասխան ազգային փոքրամասնությունների՝ ասորիների, եզդիների, լեհերի, հրեաների, հույների, ռուսների, վրացիների և քրդերի հասարակական կազմակերպությունների՝ սույն զեկույցի վերաբերյալ քննարկումների արդյունքում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Մաս 1.

Պատմական հակիրճ ակնարկ

1. Հայաստանը, աշխարհի հնագույն պետություններից մեկը լինելով, իր նորագույն պատմության մեջ առաջին անգամ անկախություն նվաճեց 1918 թվականի մայիսի 28-ին: Առաջին Հանրապետութ-յունը գոյատևեց մինչև 1920 թվականի նոյեմբերի 29-ը, երբ Հայաստանը մտավ Խորհրդային Միության կազմի մեջ՝ դառնալով նախկին Խորհրդային Միության 15 հանրապետություններից մեկը:

2. 1991 թվականի սեպտեմբերի 21-ին հանրաքվեի արդյունքներով Հայաստանի Հանրապետությունը վերականգնեց իր անկախութ-յունը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքն է 29,800 հազար քառակուսի կիլոմետր, բնակչությունը՝ մոտ 3800000[1]: Հայաստանը սահմանակից է Վրաստանին, Ադրբեջանին, Իրանին և Թուրքիային:

Հայաստանի Հանրապետությունը ըստ ՀՀ Սահմանադրության

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ընդունվեց 1995 թվականի հունիսի 5-ին անցկացված հանրաքվեի արդյունքներով[2]:

5. Հայաստանի Հանրապետությունը իր Սահմանադրությամբ հռչակ-վում է ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալա-կան պետություն: Սահմանադրությունը այն ելակետն է, որը հիմք է ծառայում օրենսդրության ձևավորմանը:

---

[1] 2000 թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում քաղաքային բնակչությունը կազմել է 2534,2 հազար մարդ, իսկ գյուղերում 1269,4 հազար մարդ: Առկա բնակչության թվաքանակն արտագաղթի հետևանքով զգալիորեն պակաս է: Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի վերաբերյալ արժանահավատ տվյալները բացակայում են արտագաղթի թերհաշվառման հետևանքով: Արտագաղթի մի մասն արտացոլող արժանահավատ տվյալներ առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով: Ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իրականացվող ուղևորափոխադրումների հաշվառման տվյալների, 1992-1999 թթ. հանրապետությունից մեկնողների թվաքանակն ավելի քան 622 հազար մարդով գերազանցել է ժամանողների թվաքանակը: Սկսած 2000 թվականի մայիս-հունիս ամիսներից տեղեկություններ են ստացվել նաև երկաթգծով և ավտոտրանսպորտային միջոցներով (ավտոբուսներով, երթուղային տաքսիներով և թեթև մարդատար մեքենաներով) ուղևորափոխադրումների վերաբերյալ:

[2] 1998 թ. ՀՀ նախագահին առընթեր ստեղծվել է հանձնաժողով՝ սահմանադրական փոփոխություններ նախապատրաստելու նպատակով: Ներկայումս ավարտական փուլում է սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների պատրաստումը: Սահմանադրական բարեփոխումները իրականացվում են սերտորեն համագործակցելով Վենետիկի Հանձնաժողովի հետ, իսկ Վենետիկի Հանձնաժողովի աշխատանքային խումբն ու ՀՀ Սահմանադրության նախագիծը պատրաստած Հայաստանի պատվիրակությունը աշխատանքային հանդիպում կունենան Ստրասբուրգում 2001 թ. հունիսի սկզբներին: Նախատեսվում է, որ վերջնական տեքստը կներկայացվի հանձնաժողովի հաջորդ լիագումար նիստին (2001թ. հուլիսի 7-8):
Հանձնաժողովը նիստի ընթացքում ամենայն հավանականությամբ կարծիք կարտահայտի նախագծի վերաբերյալ:

6. Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4 հոդվածի «Պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»:

7. Սահմանադրության 2-րդ գլուխը ամբողջովին նվիրված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին: Սահմանադրությունը հռչակում է բոլորի հավասարությունն օրենքի և դատարանի առաջ, բոլորին տրամադրում է հավասար հնարավորություն օգտվելու Սահմանադրությամբ և այլ օրենսդրական ակտերով սահմանված իրավունքներից, ազատություններից ու պարտականություններից:

ՀՀ վարչատարածքային բաժանումները

8. Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Հայաստանի Հանրապետությունը ունիտար պետություն է: Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում տեղական ինքնակառավարում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Վարչատարածքային բաժանման մասին օրենքի: Հայաստանի Հանրապետությունը բաղկացած է 10 մարզերից և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքից: Տեղական ինքնակառավարումը կարգավորվում է համապատասխան օրենքով: Տարածքային կառավարման հարցերը դեռևս կարգավորվում են ենթաօրենսդրական ակտով (ՀՀ նախագահի հրամանագիր), նախապատրաստական փուլում է գտնվում հիշյալ ոլորտի վերաբերյալ օրենքի նախագիծը:

Միջազգային իրավունքի և ՀՀ ներպետական իրավունքի փոխհարաբերությունը

9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ամրագրում է ուղղակի տրանսֆորմացիայի սկզբունքը: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, միջազգային պայմանագրերի նորմերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն միջազգային պայմանագրի նորմերը գործում են անմիջականորեն, բացառությամբ, երբ միջազգային պայմանագրերից բխում է կամ նրա արդյունավետ կիրառումը չի ենթադրում ներպետական ակտի ընդունում: Սահմանադրությանը հակասող մջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

ՀՀ դատաիրավական բարեփոխումները

10. Հայաստանի Հանրապետությունում ավարտին են հասել դատաիրավական բարեփոխումները, բայց Եվրախորհրդին անդամակցելուց հետո որոշակի այլ բարեփոխումների անհրաժեշտություն է առաջացել[3]:

ՀՀ ազգագրական իրավիճակի մասին տեղեկատվություն

11. Հայաստանի Հանրապետությունում վերջին պաշտոնական մարդահամարն անց է կացվել 1989 թվականին: Անկախությունից հետո տեղի ունեցած քաղաքական, տնտեսական, սոցիալական արմատական տեղաշարժերը, էկոլոգիական աղետի առաջն առնելու նպատակով խոշոր ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատանքների դադարեցումը, առաջացած վառելիքա-էներգետիկ ճգնաժամը, Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը, Հայ-ադրբեջանական և հայ-թուրքական սահմաններով տնտեսական շրջափակումը, 1988-ի աշխարհացունց երկրաշարժը չէին կարող իրենց կնիքը չթողնել Հայաստանի Հանրապետությունում տիրող ամբողջ իրավիճակի վրա:

12. Ինչպես հայտնի է, աշխարհում չկան մոնոէթնիկ պետություններ և Հայաստանը, բացառություն չի կազմում: Դարերի ընթացքում Հայաստանի տարածքում են բնակվել և շարունակում են բնակվել տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, որոնք երբևէ խտրականության չեն ենթարկվել: Ազգային փոքրամասնությունները մոտավոր հաշվարկով կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության մոտավորապես 3 տոկոսը:

13. Հայաստանի Հանրապետությունում հայերի հետ միասին ապրում են 20-ից ավելի ազգություններ: Դրանք են ասորիները, հույները, վրացիները, հրեաները, եզդիները, քրդերը, գերմանացիները, լեհերը, ռուսները, բելառուսները, ուկրաինացիները: Այստեղ նրանք գտել են իրենց երկրորդ հայրենիքը և իրենց ուժերի սահմաններում մասնակցում են Հայաստանի տնտեսական և մշակույթային զարգացմանը: Եթե խրոնոլոգիական ասպեկտով զուգահեռներ անցկացնենք, կնկատենք,

---

[3] Անցած տարիների ընթացքում մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության օրենսգրքերը, դատարանակազմության մասին, դատավորի կարգավիճակի մասին, դատախազության մասին, փաստաբանական գործունեության մասին, միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին, դատական ակտերի հարկադիր կատարման մասին, խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին, Մամուլի և Զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին օրենքները և այլ օրենսդրական ակտեր: Վերջնական փուլում է գտնվում Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի ընդունումը: Անհրաժեշտություն է արդեն մի շարք օրենքների՝ օմբուդսմենի մասին օրենքի, այլընտրանքային ծառայության օրենքի, զանգվածային լրատվամիջոցների մասին նոր, ոչ կառավարական կազմակերպությունների մասին նոր օրենքների ընդունումը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգիրքի ընդունումը:

որ նշված ազգությունների Հայաստանում հաստատման ամենավերջին հիշատակվող ժամկետը համընկնում է 19-րդ դարի կեսերին:

14. Ընդհանուր առմամբ, համաձայն 1989 թ. վերջին պաշտոնական մարդահամարի տվյալների, բնակչության առանձին էթնիկական բաշխումը Հայաստանում հետևյալն էր.

	Բացարձակ թվերով	Տոկոսով
Հայեր	3.083.616	93,3
Ադրբեջանցիներ	84.860	2,6
Քրդեր և եզդիներ	56.127	1,7
Ռուսներ	51.555	1,6
Ուկրաինացիներ	8.341	0,2
Ասորիներ	5.963	0,2
Հույներ	4.650	0,1
Այլ ազգություններ	9.664	0,3
Ընդհանուրը	3.304.776	100,0

ՀՀ հիմնական տնտեսական տվյալները

15. Տնտեսության ոլորտում անչափ կարևորվում է համախառն ազգային եկամտի ցուցանիշները, որոնք 2000 թվականին հետևյալն են՝
. ՀՆԱ շուկայական գներով կազմում է 1032629, 9 մլն դրամ /1, 912, 179, 592.6 USD/
. ՀՆԱ մեկ շնչին ընկնող-271, 600 դրամ, 503 ԱՄՆ դոլար

ՀՀ պետական քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում

16. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ պետական քաղաքականության իրականացման հիմնական առանցքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Սահմանադրությունը որպես հասարակության զարգացման արդյունք և սոցիալական արժեք, կոչված է ի սկզբանե պաշտպանելու անհատի իրավունքները և ազատությունները:

17. Հայաստանի Հանրապետության նախագահը «իր ժողովրդին ուղղված ուղերձում» հայտարարեց, որ Հայաստանը ոչ միայն հայերի, այլև նրանում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների համար պետք է հանդիսանա հայրենիք:

18. Հարկ է նշել, որ 1991 թ. դեկտեմբերի 8-ին Մինսկում Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի միջև ստորագրված «Անկախ պետությունների համագործակցություն ստեղծելու մասին» համաձայնագրում, որում

ձևականորեն ամրագրվեց ԽՍՀՄ գոյության ավարտը[4], հատուկ նախատեսվում էր. որ կողմերը, իրենց պաշտպանության տակ են վերցնում իրենց տարածքներում բնակվող ազգային փոքրամասնություններին՝ ցանկանալով նպաստել նրանց էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական ինքնակենցաղության արտահայտմանը, պահպանմանը և զարգացմանը: 1994 թ Մոսկվայում ԱՊՀ պետությունների նախագահները ստորագրել են «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» կոնվենցիան, որը 1995թ հոկտեմբերի 11-ին վավերացվել է Հայաստանի Հանրապետության ԱԺ-ի կողմից[5]:

19. Թերություն ենք համարում, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի ընդունվել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենք[6], հետևապես բացակայում է նաև դրա սահմանումը: Սակայն գործնականում «ազգային փոքրամասնություն» հասկացության տակ հասկացվում են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք իրենց էթնիկական ծագմամբ տարբերվում են երկրի հիմնական բնակչությունից: Նման մոտեցումը ըստ էության համընկնում է ԱՊՀ շրջանակներում կնքված «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» կոնվենցիայով սահմանված բնորոշմանը:

20. Ինչպես տեսանք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածը և հատուկ կոնվենցիան արդեն իրողություն են, սակայն անհրաժեշտ է պետական մարմին, որը դրանք կյանքի կկոչեր: Սակայն նույնիսկ այդ մարմնի բացակայությունը ինքնին չի կարող խոսել այս ոլորտում էական բացի մասին:

21. Հիշենք, որ Հայաստանը մասնակից է մարդու իրավունքների ոլորտում մի շարք միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի (տես հոդված 1):

22. 1998 թվականի Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր ստեղծվել է Մարդու իրավունքների հանձնաժողով, որը համարվում է որպես անհրաժեշտ և կարևոր քայլ օմբուդսմենի ինստիտուտի կայացման գործում: Հանձնաժողովը զբաղվում է խախտված իրավունքները քննարկելու և վերականգնելու հետ կապված դեպքերով, ձեռք է առնում միջոցներ մարդու իրավունքների խախտումները կանխելու ուղղությամբ: Հանձնաժողովի ջանքերով մշակվել է Օմբուդսմենի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ԱԺ:

---

[4] Համաձայնագրին միացան նախկին ԽՍՀՄ նաև 8 հանրապետություններ /այդ թվում նաև Հայաստանը/, 1991 թ. դեկտեմբերի 21-ին ստորագրելով դրա անբաժանելի մասը կազմող կից արձանագրությունը

[5] 2001 թվականի հունվարի դրությամբ Կոնվենցիան ուժի մեջ է Հայաստանի, Ադրբեջանի և Բելառուսի համար

[6] «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի նախապատրաստական աշխատանքներ են սկսվել ՀՀ նախագահի աշխատակազմի և ԱԺ ՀՅԴ խմբակցության նախաձեռնությամբ, ներգրավելով Հայաստանի ազգագրական գիտական մտքի առավել նշանավոր մասնագետներին:

Հանձնաժողովը բաղկացած է 17 անդամներից, որոնք հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների անդամներ, անկախ լրագրողներ և իրավաբաններ են:

23. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության գործում կարևոր քայլ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների Համակարգող խորհրդի ստեղ-ծումը Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատա-կազմին առընթեր: Այդ մարմինը պաշտոնապես ստեղծվել է 2000թ. հունիսի 15-ին՝ Հայաստանի Հանրապետության նախա-գահի կարգադրությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների պաշտպանվածու
թյունն ապահովելու, նրանց միջհամայնքային հարաբերություն-ներն ակտիվացնելու, ինչպես նաև հատուկ կրթամշակութային, իրավական և այլ խնդիրների նկատմամբ պետական հոգածությունն առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունից ելնելով: Հարկ է նշել, որ Նախագահի կարգադրությունը հետևել է հասարակական մշակութային, ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ներկայացուցիչների 2000 թ. մարտի 12-ի 1-ին համագումարին: Համակարգող խորհուրդը հանդիսանում է միջանկյալ օղակ ազգային փոքրամասնությունների հարցերով առանձին պետական կառույց ստեղծելու ուղղությամբ: Համակարգող Խորհրդի հետ առանձին հանդիպումներ են ունեցել ՀՀ նախագահը և ՀՀ վարչապետը, որոնց ընթացքում բազում հարցերի շարքում հատուկ քննարկվել է ազգային փոքրամասնությունների ընդհանուր մշակութային կենտրոնի ստեղծման խնդիրը:

24. Թեև Հայաստանի Հանրապետությունում բացակայում է «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենք, սակայն մի շարք օրենքներ ուղղակիորեն սահմանում և երաշխավորում են ազգային փոքրամասնությունների իրավունքները՝ այդ օրենքների կարգավորման առարկայի շրջանակներում: Այսպես, Լեզվի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում է լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների լեզվահարաբերություն-ները: Նշված օրենքում հայերենը հռչակվում է որպես պետական լեզու, որը պետք է սպասարկի Հայաստանի Հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Այնուհետև նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը: Հիշյալ օրենքի 2-րդ հոդվածը նշում է «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրերով և հովանավորությամբ հայերենի պարտադիր ուսուցմամբ»: Գործում են նաև «Կրթության մասին» և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքներ և այլն:

25. Հարկ է նշել, որ «Ազգային փոքրամասնություն» հասկացությունը բառի հավաքական իմաստով ավելի հասկանալի է հայ ժողովրդին, որը 20-րդ դարի սկզբի ցեղասպանության պատճառով, սփռվել է ամբողջ աշխարհով մեկ և կազմում է փոքրամասնություն տարբեր երկրներում: Նշենք նաև այն, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 11-րդ հոդվածը, արտացոլելով հայ ժողովրդի մեծ մասի տարագիր և աշխարհասփյուռ վիճակը, պարտավորեցնում է Հայաստանի Հանրապետության իշխանություններին միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում՝

ա/ նպաստել արտերկրում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանման,

բ/ աջակցել այլ պետություններում հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

Ուստի և նման պրոբլեմ աչքի առաջ ունենալով՝ անշուշտ մեր Հանրապետությունը ուշադրության կիզակետում է պահելու ազգային փոքրամասնություններին վերաբերող նույնական բախտորոշիչ քաղաքականության իրականացումը:

Շրջանակային կոնվենցիայի նպատակների իրագործմանը ուղղված քաղաքականությունը

26. Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածը հռչակում է, որ օրենքները կիրառվում են միայն պաշտոնական հրապարակումից հետո: Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող չհրապարակված իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն: Հայաստանի Հանրապետության օրենքները հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում:

27. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագրում»: «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը» Հայաստանի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական պարբերականն է, որը հրատարակվում է Հայաստանի Հանրապետության ԱԳՆ սահմանած պարբերականությամբ: Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը հրապարակվում են նաև «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի հրապարակման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

28. 1998 թվականի նոյեմբերի 12-ին Եվրախորհրդի հովանավորությամբ Երևանում տեղի ունեցավ ինֆորմացիոն հանդիպում, որի նպատակն էր իրագեկելու ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի դրույթների վերաբերյալ: Ձեռք առնված միջոցառումները հնարավորություն են տալիս իրական դարձնելու

հասարակությանը սույն կոնվենցիայի վերաբերյալ իրազեկ դարձնելու ուղղությամբ իրականացված ջանքերը:

29. ՀՀ կառավարության և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի միջև 1998 թվականին կնքված Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ՀՀ ԱԳՆ կողմից 2000 թ.-ի մայիսին Երևանում կազմակերպվեց կլոր սեղան նվիրված ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների խնդիրներին: Կլոր սեղանի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանում բնակվող ազգային և կրոնական փոքրամասնությունների, ինչպես նաև շահագրգիռ պետական կառույցների ներկայացուցիչները: Եվրոպայի խորհրդից և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ից հրավիրված փորձագետները մեկ անգամ ևս պարզաբանեցին մասնակիցներին մասնավորապես ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում գոյություն ունեցող միջազգային չափանիշները: Քննարկումների արդյունքում որոշվեց ՀՀ կրթական հաստատությունների ծրագրերի մեջ նախատեսել հատուկ դասընթացներ համապատասխան թեմաներով: Այս նպատակով նախապատրաստվում են և մոտակա ժամանակ կհրատարակվեն հատուկ ուսումնական ձեռնարկներ:

ՀՀ օրենսդրության թերությունները

30. Վերջին տարիների ընթացքում կատարված միջազգային իրավական փաստաթղթերի և Հայաստանի օրենսդրության համեմատական վերլուծությունը ի հայտ բերեց վերջինիս անկատարելիությունը: Բացահայտված հիմնական թերությունները հետևյալն են.

ա) Չկա հստակ վերաբերմունք մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն արժեք ճանաչելու նկատմամբ

բ) Մարդու արժանապատվությունն ամրագրված է ոչ թե որպես սահմանադրական իրավունքի, այլ որպես քրեաքաղաքացիական իրավունքի օբյեկտ: Նախկին խորհրդային իրավական համակարգին բնորոշ այդ մոտեցումը Հայաստանում դեռևս չի հաղթահարվել

գ) Չկա իրավունքի և օրենքի հստակ սահմանազատում, ավելին, զգալի է իրավունքն օրենքին ենթադասելու վտանգը

դ) Անհատը զրկված է սահմանադրական արդարադատության իրավունքից և այլն:

Այս բոլորը էական բացեր են, որոնք լրջորեն թուլացնում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները: Առկա թերությունները շտկելու և իրավական դաշտը կատարելագործելու նպատակով Հայաստանում իրականացվում են սահմանադրական բարեփոխումներ:

ՄԱՍ II

Հոդված 1

Ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություն-ներին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպա-նության անբաժան մասն է և, որպես այդպիսին, հանդիսանում է միջազգային համագործակցության բնագավառ:

31. Ընդունելով ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը որպես մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մաս՝ անհրաժեշտ է ուշադրություն բևեռել միջազգային ոլորտում տեղի ունեցող ինտեգրացման գործընթացին: Սովորաբար միջազգային իրավունքում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը իրականացվում է 2 ուղղությամբ՝ մարդու հիմնական իրավուն-քների և ազատությունների ապահովման միջոցով և ազգային փոքրամասնությունների հատուկ իրավունքների ճանաչման և իրականացման միջոցով:

32. Հայաստանի Հանրապետությունը 1992 թվականի մարտին դարձավ ՄԱԿ-ի անդամ պետություն: Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն անդամակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ, ՅՈՒՆԵՍԿՕ և այլն), որը ցույց է տալիս Հայաստանի Հանրապետության ակտիվ գործունեությունը միջազգային համագործակցության բնագավառում: Իսկ սույն թվականի հունվարի 25-ին Հայաստանի դարձավ Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ:

33. Հայաստանի Հանրապետությունը մասնակից է հետևյալ միջազգային փաստաթղթերի.

- ՄԱԿ-ի 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր և նրա ֆակուլտատիվ արձանագրութ-յուն
- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի համաձայնագիր, 1-ը հունիսի 1992 թ.
- Ցեղասպանության ոճրագործության կանխման և դրա համար պատժի մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիա
- Ապարտեիդի հանցագործության կանխման և նրա պատժման մասին ժնևի կոնվենցիա,
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965թ. ժնևի կոնվենցիա,
- Կոնվենցիա տանջանքների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ, 09 հունիսի 1993թ.
- ժնևի 1951թ. հուլիսի 28-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան և ժնևի 1967թ. հոկտեմբերի 4-ի Փախստականների կարգավիճակի մասին արձանագրությունը,
- Կոնվենցիա կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականության վերացման մասին, 09 հունիսի 1993թ.

- Միջազգային դաշնագիր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին/1993թ. հունիսի 9/
- Համաձայնագիր տեղահանված անձանց, ազգային փոքրամասնությունների և ժողովուրդների իրավունքների վերականգնման հետ կապված հարցերի շուրջ, 09 հունիսի 1993թ.
- Կոնվենցիա «Ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին», ստորագրվել է ԱՊՀ շրջանակներում 1994թ. հունվարի 21-ին, վավերացվել է 1995թ. հոկտեմբերի 11-ին, և այլն:

34. Հայաստանի Հանրապետությունը իր անդամակցության արարողության պահին ստորագրեց Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության 1950 թվականի եվրոպական կոնվենցիան, և նրա թիվ 1, 4, 6, 7 արձանագրությունները: Անդամակցության հետ կապված պարտավորություններից ելնելով Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է նաև Ազգային փոքրամասնությունների և ռեգիոնալ լեզուների Եվրոպական խարտիան 2001 թ. մայիսի 11-ին, ինչպես նաև կստորագրի Եվրոպական սոցիալական խարտիան:

Հոդված 2

Սույն շրջանակային Կոնվենցիայի դրույթները պետք է կիրառվեն բարեխիղճ կերպով, ըմբռնման և հանդուրժողականության ոգով և բարիդրացիության, պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության սկզբունքներին համապատասխան:

35. ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»:

Որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է անշեղորեն հետևելու միջազգային իրավունքի սկզբունքներին, որոնց մեջ էլ պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքն է:

Հոդված 3

1. Ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ, պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք և այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որ կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում:

2. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք, անհատապես, ինչպես նաև մյուսների հետ խմբերով, կարող են իրականացնել իրավունքներ և օգտվել ազատություններից, որոնք բխում են սույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից:

36. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 «ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված կանոնադրության 6-րդ կետում սահմանվում է, որ ՀՀ քաղաքացիների անձնագրում ՀՀ քաղաքացու ցանկությամբ կարող է կատարվել, ի թիվս այլ նշումների, նաև ազգության մասին նշում՝ ՀՀ-ում ներքին գործերի մարմինների, իսկ օտարերկրյա պետություններում՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն-ների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից:

37. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանա-դրությունը օգտագործում է «Ազգային փոքրամաս-նություններ» եզրույթը: Ազգային օրենսդրությունը մի շարք անգամ հիշատակում է ազգային փոքրամասնությունների վերաբերյալ, սակայն մանրակրկիտ չի տալիս դրա իրավաբանական սահմանումը: Ըստ երևույթին, այս հարցի ավելի մասնագիտորեն և մանրամասն կարգավորման անհրաժեշտությունը թողնված է առանձին օրենքի հայեցողությանը:

38. Որպես կառավարման մարմին, որը պատասխանատու է ազգագրական տվյալների հավաքման համար հանդիսանում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական ազգային ծառայությունը:

39. Անդրադառնալով ազգային փոքրամասնությունների ներկայիս թվաքանակի ամպլիտուդային, ապա այն տատանվում է ազգությունների առանձին պաշտոնական թվարկմամբ 200-ից մինչև 12000-ի սահմաններում: Այսպես օրինակ, լեհերի թվաքանակը հասնում է 210-ի, որից շուրջ 100 հոգի բնակվում են Հայաստանի տարբեր շրջաններում: Ազգային փոքրամասնություն-ների մեջ ավելի մեծ քանակ ունեն ռուսները: Եթե ուշադրությամբ հետևենք վիճակագրական տվյալներին, 1989 թվականի տվյալներով Հայաստանում բնակվում էին 51 հազար ռուս: Այժմ կապված Հայաստանի Հանրապետության ներկայիս տնտեսական ոչ բարվոք վիճակի հետ նկատվում է նշված ազգային փոքրամասնությունների թվաքանակի կրճատում: Ներկայումս ռուսները Հայաստանում հաշվարկվում են 12-ից 13 հազար: Չմոռանանք նաև, որ Հայաստանում բնակվում են նաև մոլդովացիներ, օսեր, սլովակներ, մորդվաններ, ուզբեկներ, բաշկիրներ, թաթարներ, լատիշներ, լիտվացիներ, էստոնացիներ, կաբարդիններ, կոմիներ, իտալացիներ և այլ: Պարզապես սակավաթիվ լինելու հանգամանքը կուռ հիմք չէր կարող հանդիսանալ այն հարցում, որ վերջիններս ունենային իրենց ազգային կազմակերպությունները և դրանով իսկ իրենց հնչեղությունը: Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների բնակության վայրի տվյալներին, ապա ՀՀ-ում շուրջ 6000 ասորիներ բնակվում են Երևանում, Արարատի մարզում Դմիտրով գյուղ, Կոտայքի մարզում, Արմավիրի մարզում, ոչ պակաս քան 4000 հույներ մեծամասամբ Երևանում, Ալավերդիում, Ստեփանավանում, Հրազդանում, հրեաներ 90 %-ից ավելին (գրանցված 700 մարդ) բնակվում է Երևանում, մնացած մասը Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում, գերմանացիներ՝ որոնց (1998 թվականին) համայնքը կազմող 97 ընտանիքներից 56-ը բնակվում են Երևանում, 13-ը Վանաձորում, 2-3 ական ընտանիքներ Գյումրիում, Հոկտեմբերյանում, Աբովյանում, Գառնիում, Բյուրականում, Այրումում, վրացիներ (110 հոգի), նրանց բնակության հիմնական վայրը Երևանն է, ինչպես նաև Վանաձորը (20 մարդ): Համայնքի անդամ են այն անձինք, ովքեր գոնե 3 սերունդ առաջ ունեցել են վրացի ազգականներ, և այլն: 1988-ից 1992 թթ ընթացքում հասկանալի պատճառներով մոտ 300000-ից 350000 հայեր և ազերիներ լքեցին համապատասխանաբար 2 պետությունների տարածքները[7]:

[7] Միևնույն ժամանակ, համաձայն մարդահամարի պաշտոնական տվյալների, Հայաստանում ազերիներից որոշ մասը լքեց ՀՀ տարածքը 8-10 ամիսների ընթացքում՝ նախապես փոխանակելով կամ վաճառելով իրենց բնակարանները: Այս փաստը պաշտոնապես գրանցված է քաղաքային խորհուրդներում՝ կան այդ ապացուցող համապատասխան փաստաթղթեր: Բացի այդ 1989-90 թթ. ՀՀ կառավարությունը վճարել է 110 մլն ամերիկյան դոլարին համարժեք փոխհատուցում նրանց, ովքեր լքել են ՀՀ տարածքը՝ առանց իրենց բնակարանները փոխանակելու կամ վաճառելու:

Հոդված 4

1. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարությունը և օրենքով հավասար պաշտպանությունը: Այդ առումով, արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելիության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

2. Կողմերը պարտավորվում են, անհրաժեշտ դեպքերում, ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում, աջակցեն ազգային փոքրամասնությանը և բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց միջև լիակատար և իրական հավասարությունը: Այս նպատակով, Կողմերը ըստ պատշաճի պետք է հաշվի առնեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առանձնահատուկ պայմանները:

3. Երկրորդ կետի դրույթներին համապատասխան ընդունված միջոցները չպետք է համարվեն խտրականություն:

40. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածը հռչակում է ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիները ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունք: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15 հոդվածի ՀՀ քաղաքացիները անկախ ազգությունից, ռասայից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները: Իսկ 16-րդ հոդվածը որպես լրացուցիչ երաշխիք նշում է. «Բոլորը հավասար են օրենքի առաջ և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով»: Այնուհետև Սահմանադրության 38 հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք»:

41. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության իրականացման գործում մեծ է 1998 թ. ապրիլին Հայաստանի Հանրապետության Նախագահին կից ստեղծված մարդու իրավունքների հանձնաժողովը, որը բաղկացած է 17 անդամներից: Հանձնաժողովի հիմնական առաքելության և նշանակության վերաբերյալ խոսվել է Զեկույցի 22 կետում:

42. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպա-նության գործում կարևոր քայլ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի խորհրդականին կից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնութ-յունների Համակարգող խորհրդի ստեղծումը: Տես 23 կետ: Այդ խորհուրդը ունի 11 ազգային

փոքրամասնությունների 2-ական ներկայացուցիչ (ասորիներ, բելոռուսներ, հույներ, վրացիներ, հրեաներ, եզդիներ, քրդեր, գերմանացիներ, լեհեր, ռուսներ և ուկրաինացիներ): Մշակվել է խորհրդի կանոնադրությունը: Ընդունվել են հետևյալ հայեցակարգային ուղղությունները՝

- ազգային փոքրամասնությունների շահերից բխող օրենքների նախագծերի մշակմանը անմիջական մասնակցություն
- տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն
- ազգային փոքրամասնություններին վերաբերող քաղաքական, տնտեսական, էթնոմշակութային բնույթի հարցերի համակարգում
- քաղաքացիների և կազմակերպությունների բողոքների, դիմումների և առաջարկությունների քննարկում
- ինֆորմացիոն և հրատարակչական գործունեության իրականացում
- կոնգրեսների, նիստերի, սեմինարների, ցուցահանդեսների անցկացում
- ազգային փոքրամասնությունների հայրենիքի հետ կապերի հաստատում և այլն:

Հոդված 5

1. Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

2. Իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականության իրականացման համար ձեռնարկվող միջոցներին ոչ ի վնաս, Կողմերը պետք է ձեռնպահ մնան ցանկացած քաղաքական կամ գործնական գործողություններից, որոնք հետապնդում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, հակառակ նրանց կամքի, միաձուլելու նպատակ և պետք է այդ անձանց պաշտպանեն ցանկացած գործողություններից, որոնք ուղղված են այդպիսի միաձուլման:

43. Ուշադրության առնելով լիիրավ և իրական իրավահա-վասարության անհրաժեշտությունը, հետապնդելով ավելի շատ ամրապնդելու ազգային փոքրամասնությունների ինքնակենցա-ղությունը, դեմոկրատական իրավական պետության հիմքը ամրապնդելու, և ելնելով միջազգային իրավունքի հայտնի նորմե-րից և սկզբունքներից, ինչպես արդեն նշվել է զեկույցի նախորդ մասերում, Հայաստանում մշակվում է Ազգային փոքրամասնությունների մասին օրենք:

44. Այդ օրենքի նախագծով նախատեսված է ազգային փոքրամասնությունների քաղաքական, տնտեսական, սոցիալական, և այլ իրավունքների դատական և այլ միջոցներով պաշտպանությունը: Մինչ այս օրենքի ընդունումը այս հարցերի շրջանակը կարգավորվում է ընդհանուր հիմունքներով՝ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված ընթացակարգերով:

45. Ազգային փոքրամասնությունների մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար իրավական ակտերի ծավալի մեջ կենտրոնականը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն է՝ հանձինս իր 37 հոդվածի:

46. Անկախության հռչակումից հետո առաջին օրենքներից մեկը, որը ընդունվել է մեր պետության կողմից, եղել է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, որի առաջին հոդվածում նշվում է, որ «յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն որոշում է իր հարաբերությունները կրոնի հարցում, իրավունք ունի դավանել ցանկացած կրոն /.../ անձամբ կամ համատեղ այլ քաղաքացիների հետ իրականացնել կրոնական ծիսակատարություններ»:

47. 2000 թվականի հունվարին պաշտոնապես գրանցված են եղել 14 տարբեր կրոնական ուղղություններ:

1. Հայկական առաքելական եկեղեցի

2. Հայ կաթոլիկ եկեղեցի
3. Ռուսական ուղղափառ եկեղեցի
4. Եզդիների կրոնական համայնք
5.Հուդայական համայնք
6. Հեթանոսների համայնք
7. «Բահայ» համայնք
8. Մորմոններ
9. Բապտիստներ
10. Եվանգելիստներ
11. Հիսուսականներ
12. Հարիզմատներ
13. 7-րդ օրվա ադվենտիստներ
14.Նոր առաքելական եկեղեցի

Առանց գրանցման գործում են «Եհովայի վկաներ», որի կանոնադրությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը և զինապարտության մասին օրենքին, և «Կրիշնայական գիտակցություն» համայնքները:

Հոդված 6

1. Կողմերը պետք է խրախուսեն հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսության մթնոլորտը, և պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց միջև, անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելիությունից, փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումը և համագործակցությունը խթանելու համար, մասնավորապես, կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառներում:

2. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:

48. Հայաստանը ունի հարուստ մշակութային ժառանգություն և մշակութային ինստիտուտների խիտ ցանց: Վերջին 10 տարիների ծանր սոցիալական տնտեսական պայմանները լուրջ հարված հասցրին մշակութային ոլորտին: Ամենագլխավոր պրոբլեմներից մեկը նշված ոլորտում օրենսդրական դաշտի բացակայությունն է: Կառավարության քննարկման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի նախագիծը: Իսկ մշակման փուլում են գտնվում նաև հետևյալ օրենքների նախագծերը՝ «ՀՀ թանգարանային ֆոնդի և թանգարանների մասին», «ՀՀ-ում գրադարանային գործի և գրադարանների մասին», «ՀՀ Կինոմատոգրաֆիային պետական աջակցության մասին», «Մշակութային արժեքների ներմուծման և դուրս բերման մասին» օրենքները:

49. 1998 թվականին Հայաստանում գործող թատրոնների թիվը հասնում է 21-ի: Հաշվարկված է, որ Հայաստանում տարվա ընթացքում անց է կացվում 2024 ներկայացում, որոնց ներկա են գտնվել 487 հազար մարդ: Թատրոնների մեջ հանրահայտներից է հանդիսանում է Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնը:

50. Հանրապետությունում կազմակերպվում են 2 տեսակի թատրոններ՝ պետական (Հանրապետական, մարզային և շրջանային) և ոչ պետական: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կառուցվածքում գործում է 13 պետական թատրոններ և պետկրկես:

51. Մշակման փուլում է գտնվում կառավարության որոշման նախագիծը «ՀՀ թատերական մշակույթին սոցիալական և տնտեսական օգնություն ցուցաբերելու մասին»:

52. Հայաստանում տարվա ընթացքում կազմակերպվում է 579 համերգներ, մոտավորապես 97400 դիտորդների համար:

53. Հայաստանի Հանրապետության մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության համակարգում գործում են հետևյալ համերգային և երաժշտական անսամբլները, սիմֆոնիկ

անսամբլը, ակադեմիական երգչախումբը, պետական կամերային նվագախումբ, լարային քառյակ, հոգևոր մշակույթի կենտրոնը, 3 երաժշտականուսումնական հաստատություններ, ժողովրդական ստեղծագործության կենտրոնը, համերգային սրահը:

54. Շատ ազգային փոքրամասնություններ, որոնք ներկայացվել են Հայաստանում, ունեն իրենց համայնքներում էթնոգրաֆիական համույթներ: Հատկապես հանրահայտ է մանկական և մեծահասակների ուկրաինական երգչախումբը, որը գործում է Երևանում և Վանաձորում: Հայաստանում բացի ուկրաինական երգչախմբից, գործում են ասորական, ռուսական, սլավոնական, հունական ազգագրական որակավոր համույթները:

55. Ծանր տնտեսական իրավիճակն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև գրադարանային գործի վրա, որի պատճառով հնարավոր չէ դրանք զինել նոր գրականությամբ: Նույնիսկ ամենախոշոր գրադարանները ի վիճակի չեն լրացնել իրենց ֆոնդը: Քննարկման փուլում է գտնվում «Հրատարակությունների պարտադիր օրինակի մասին» օրենքը:

56. Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածը ամրագրում է յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: Ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով: Նշված հարցի երաշխիքներ իրագործելու համար, նախ և առաջ, պետական քաղաքականության գործընթացում նշենք այն, որ Հայաստանի Հանրապետության 2000 թվականի պետբյուջեի մասին օրենքում կրթության ոլորտին հատկացված է բավականին խոշոր գումար՝ 29,908,853.7 հազար դրամ: Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների համար առանձին նախատեսված դպրոցներ գոյություն չունենալու փաստին, այնուամենայնիվ կան դպրոցներ, որտեղ հատուկ դասընթացներ են կազմակերպվում իրենց մայրենի լեզուներով: Չմոռանանք նաև թեքումով դպրոցները:

57. Հոգևոր մշակութային ոլորտում նախ սահմանադրության 36 և ապա 37 հոդվածները լիովին երաշխավորում են ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին ունենալ գրական, գեղարվեստական, գիտական և ստեղծագործական ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

58. Այս առումով Ազգությունների միությունը իր ստեղծման օրվանից մինչև այսօր կազմակերպել է 30-ից ավելի միջոցառումներ, ինչպես նաև հանդիպումներ հանրապետության ղեկավարության, հոգևորականության, օտարերկրյա դեսպանությունների, եվրամիության ներկայացուցիչների հետ: Ազգությունների միության ջանքերով Երևանում սեպտեմբերին անցկացվեց գունագեղ խորագրով

երաժշտական ֆեստիվալ, որին մասնակցում էին բոլոր էթնիկական խմբերի ներկայացուցիչները: Հերթական ֆեստիվալը, հանդիսանում էր չորրորդը ըստ հերթականության: Իրականացված միջոցառումներից անհրաժեշտ է առանձնացնել արդեն երրորդ տարին անընդմեջ անցկացվող ազգային մշակույթների փառատոնը՝ նվիրված Հայաստանի անկախությանը: Սույն միջոցառումը վերածվել է ավանդույթի: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտական ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Ազգությունների միությունը և Հայաստանի կոնֆլիկտների լուծման կենտրոնը հրատարակել են «Հայաստանի ազգությունները» ժողովածուն՝ ռուսերեն լեզվով: Ժողովածուն կազմվել է «Էթնիկական-քաղաքական հակամարտությունների կարգավորման ազդեցությունը Հայաստանից արտագաղթը կանխելու հարցում» նախագծի շրջանակներում: Հիշյալ նախագիծը ՄԱԿ-ի կողմից ստացել է շնորհադրամ: Առաջին անգամ Հայաստանի ոչ բնիկ բնակչության դրությունը դարձել է հատուկ ուսումնասիրությունների առարկա: Ժողովածուի մեջ լուսաբանված են հարցերի որոշակի շրջանակ՝ հայերի հետ կոնկրետ էթնիկական խմբերի ունեցած պատմական կապերը, նրանց ներկայիս դրությունը, կարիքները, պահանջները և առաջարկությունները կյանքի պայմանների բարելավման, իրավունքների ընդլայնման և պաշտպանության, Հայաստանի Հանրապետության պետական քաղաքական ու մշակութային կյանքին լիիրավ մասնակցելու վերաբերյալ: Հայաստանի ազգային համայնքների ներկայացուցիչները այդ ժողովածուն ուղարկել են իրենց ծագման երկիր: Հրատարակվել է նաև «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություն-ներն այսօր» հիմնարար ուսումնասիրությունների I հատորը: Աշխատությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների՝ (եզդի քրդերի), ռուսների, հույների, ասորիների և բոշաների ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, էթնոմշակութային ժամանակակից հիմնախնդիրներին, որոնք առաջացել են հանրապետությունում իրականացվող վերափոխումների ընթացքում[8]: Բացի այդ 1994 թվականի հոկտեմբերին Ազգությունների միության կողմից խնդրագրեր են հղվել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, Ռուսաստանի, Ուկրաինայի, Հունաստանի, Իսրաելի, Գերմանիայի կառավարությունների ղեկավարներին և հոգևոր առաջնորդներին՝ Ազգությունների միության մշակութային կենտրոնի ստեղծմանն օժանդակելու խնդրանքով, 1996 թվականի սեպտեմբերին Ազգությունների միության մշակույթների փառատոնի առաջին փուլը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 5 ամյակին, 1997 թվականի ծրագրում՝ մարտին «Նովրուզ» քրդերի ազգային տոնը, ապրիլին՝ հայ-քրդական բարեկամության ընկերության շնորհանդես-քուրդ մտավորականության խորհրդի վարչության հետ համատեղ և այլն:

---

[8] Հեղինակների խումբը դաշտային ազգագրական հետազոտություններ իրագործեց հանրապետության բոլոր մարզերի վերոհիշյալ փոքրամասնությունների շրջանում, որոնց արդյունքները հիմք հանդիսացան սույն գրքի համար: Աշխատության մեջ ոչ միայն վեր են հանված հիշյալ ազգային փոքրամասնությունների զարգացման ընթացքի բարդույթները, այլև առաջադրված են դրանց հաղթահարման հնարավոր ուղիներն ու եղանակները՝ հիմնվելով թե՛ հետազոտման տվյալների և թե՛ միջազգային վավերագրերի վրա: Աշխատությունը ունի ճանաչողական և կիրառական նշանակություն:

59. 1999 թ. գործում էր 98 թանգարաններ, որոնք սպասարկում էին 763900 այցելուների: Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի թանգարանները փաստորեն զրկվել են անհրաժեշտ ներդրումներից և պետության կողմից ակնկալվող նյութական աջակցությունից:

60. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորվում է բոլորի հավասարությունը օրենքի առջև և հավասար պաշտպանություն, ավելացրած դրան Հայաստանի Հանրապետության Սահմանա-դրության 38 և 39 հոդվածները ամենարդյունավետ կերպով նպաստում են դրա երաշխավորվածությանը:

61. Քաղաքացիական հասարակությունում իր դերի նշանակության մասին են խոսում զանգվածային լրատվամիջոցները: Մամուլի և զանգվածային լրատվության միջոցների վերաբերյալ գործում է օրենք, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները ազատ են և գրաքննության չեն ենթարկվում, այնուհետև Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ունեն մամուլով և զանգվածային լրտվության մյուս միջոցներով իրենց տեսակետները, կարծիքները արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավաստի լրատվություն ստանալու իրավունք: Հայաստանի Հանրապետությունում մամուլի և զանգվածային լրատվության միջոցների որևէ տեսակի մենաշնորհ չի թույլատրվում:

62. Մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները առաջնորդվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, հավասարության, մարդասիրության, տարակարծության, հանդուրժողականության, հարգանքի, խղճի ազատության սկզբունքներով և համամարդկային այլ արժեքներով, օժանդակում են հրապարակայնությանն ու ժողովրդավարությանը, մտքի, խոսքի, բազմակարծության ազատությանը:

63. Համաձայն մեր ունեցած տեղեկատվության, որը տրամադրել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը և Հայաստանի Հանրապետության նախագահին կից մարդու իրավունքների հանձնաժողովը, որևիցե վիճակագրական տվյալներ, որոնք վերաբերում են ազգային կամ ռասայական թշնամանք կամ երկպառակություն հարուցելուն, ազգային պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու նպատակին ուղղված դիտավորյալ գործողություններ կատարելուն, ինչպես նաև քաղաքացիների ուղղակի կամ անուղղակի իրավունքների սահմանափակելում կամ ուղղակի կամ անուղղակի առավելությունների սահմանելուն (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 69 հոդված), ապա որևէ բողոք և դատարանի կողմից ընդունված որոշում բացակայում են այդպիսիք չլինելու պատճառով:

Հոդված 7

Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքների հարգումը:

64. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26 հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ունեն խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք: Այս հոդվածը վերարտադրում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 21-րդ հոդվածի համառոտ բովանդակությունը:
65. Անցած 10 տարիների խճանկարը ցույց է տալիս, որ այս հարցում Հայաստանի իշխանությունները ականատես են եղել բազմաթիվ ցույցերի, երթերի, միտինգների, կապված անցումային ժամանակահատվածի հետ: Նշված ոլորտում քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարը, համաձայն տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 27 հոդվածի 4 կետի, իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծում է հանրահավաքներ, երթեր, ցույցեր և զանգվածային այլ միջոցառումներ անցկացնելու համար թույլտվություն տալու հարցը:

66. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25 հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմակերպելու, այդ թվում արհեստակցական միություններ ստեղծելու, և դրանց անդամագրվելու իրավունք:

67. Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների մինչև «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ուժի մեջ դնելու մասին» օրենքի պահանջի կիրարկումը ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված են եղել Հայաստանի Հրեական համայնքը, «Աթուր» ասորական ասոցիացիա», Հայաստանի հույների հանրապետական «Պոնտի» ընկերություն, ՀՀ քուրդ մտավորականության խորհուրդ, «Քուրդիստան կոմիտե», «Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպություն, ուղղափառ հավատացյալների հոգաբարձուների խորհուրդ, «Մենորա» հրեական մշակութային կենտրոն», Հայաստանի և Արցախի հույների հասարակական կազմակերպություն, Հայաստանի հույների «Պատրիդա», «Հայաստանի Հանրապետության ազգությունների միություն», ՀՀ գերմանացիների «Աղբյուր» համայնք, «Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա», Հայաստանի Հույների ֆեդերացիա, «Բերյոզկա» ռուսների բարեգործական միություն, Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպություն, Եզդիաքրդական համայնք, «Ֆաէտոն» հունական համայնք, «Սլավոնական մշակութային, սպորտային-առողջարարական կենտրոն», Աշխարհի եզդիների ազգային միություն, «Ասորական «Աշուր» երիտասարդական կենտրոն», Վանաձորի «Պոնտի» հունական

համայնք, Ալավերդու «Ռոմեոս» հունական համայնք, «Անաստասի հունական համայնք, Հայաստանի «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս», Նոյեմբերյանի «Օլիմպիոս» հունական համայնք, ՀՀ ռուսական համայնքների կոնգրես մշակութային հասարակական կազմակերպություն, «Եզդիների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպությունները[9]:

[9] Ազգային փոքրամասնությունների շուրջ 13 հասարակական կազմակերպություններ վերագրանցվել են՝ համաձայն «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ուժի մեջ դնելու մասին» օրենքի դրույթներին

Հոդված 8

Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավատը բացահայտ դավանելու, ինչպես նաև կրոնական հաստատություններ, կազմակերպություններ և ընկերություններ ստեղծելու իրավունքը:

68. Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23 հոդվածի յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Կրոնի և համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ Սահմանադրության 45 հոդվածում նախատեսված հիմքերով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 17, 19, 20, 39, 41-43 հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական դրության ժամանակ կամ Սահմանադրության 55 հոդվածի 14 կետով նախատեսված դեպքերում:

69. Սույն զեկույցի 46, 47 կետերում արծարծվել են այն հարցերը, որոնք վերաբերում են հոգևոր ոլորտին:

70. Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատված է պետությունից:
Պետք է նշել, որ պետական և կրոնական կազմակերպությունների միջև հարաբերությունները կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիզորված պետական կառավարման մարմինը՝ Կրոնի գործերով պետական խորհուրդ:

71. Հայաստանի Հանրապետության խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքի դրույթներով սահմանվում է, որ այն կրոնական կազմակերպությունները, որոնց հոգևոր կենտրոնները գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, չեն կարող ֆինանսավորվել այդ կենտրոնների կողմից: Այնուհետև մյուս դրույթները զարգացնում են այն միտքը, որ կրոնական կազմակերպությունները չեն կարող ֆինանսավորվել կուսակցությունների կողմից և ֆինանսավորել վերջիններիս: Այստեղից արդեն հետևում է պարզ եզրակացություն, որ Հայաստանի Հանրապետությունում չկան պետության կողմից ֆինանսավորվող կամ աջակցության ուղղակի կամ անուղղակի ձևերից օգտվող կրոնական կազմակերպություններ: Հիշյալ օրենքը մանրամասն տալիս է կրոնական կազմակերպությունների ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրները և դրանց օգտագործման ուղղվածությունը:

ՀՈԴՎԱԾ 9

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիքներ ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ պետական իշխանությունների միջամտությունից և սահմաններից: Իրենց իրավական համակարգի շրջանակներում, Կողմերը պետք է ապահովեն, որպեսզի լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք չենթարկվեն խտրականության:

2. Առաջին կետը չի արգելում, որպեսզի Կողմերը, հնչուն ռադիոյի և հեռուստահեռարձակման կամ կինամատոգրաֆիայի ձեռնարկությունների համար արտոնագրում պահանջեն՝ առանց որևէ խտրականության և օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

3. Կողմերը չպետք է արգելեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից տպագիր մամուլի միջոցների ստեղծումն ու օգտագործումը: Հնչուն ռադիոյի և հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով, որ դա հնարավոր է, և հաշվի առնելով 1-ին կետի դրույթները, Կողմերը, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, պետք է երաշխավորեն լրատվական սեփական միջոցների ստեղծման և օգտագործման հնարավորությունը:

4. Իրենց իրավական համակարգերի շրջանակներում, Կողմերը պետք է համապատասխան /ադեկվատ/ միջոցներ ձեռնարկեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար լրատվական միջոցների մատչելիությունը դյուրացնելու, ինչպես նաև հանդուրժողականությունը խրախուսելու և մշակութային բազմակարծությունը ապահովելու համար:

72. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը խոսքի ազատությունը՝ որպես մարդու կարևոր իրավունքներից մեկը, ամրագրել է իր 24 հոդվածում: Համաձայն հիշյալ հոդվածի յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքը պնդելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն: Այնուհետև նշվում է՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

73. Հայաստանի Հանրապետությունում գործում է «Զանգվածային լրատվամիջոցների մասին» օրենք և Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենք, որը ընդունվել է 2000 թվականի հոկտեմբերի 9-ին: (Այս օրենքի որոշ դրույթներ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող): Ըստ այդ օրենքի սահմանվում է հեռուստառադիոընկերությունների կարգավիճակը, դրանց հիմնադրման, արտոնագրման և ղեկավարման կարգը, իրավունքների և պարտականությունների առաջացման հիմքերը և այլն:

74. Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 5 հոդվածում սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն հայերենն է, բացառությամբ այդ օրենքով սահմանված դեպքերի: Օտար լեզուներով հեռուստառադիոհաղորդումները, գեղարվեստական, վավերագրական ր մուլտիպլիկացիոն կինոնկարները, ինչպես նաև հայերեն հաղորդումների օտարալեզու դրվագները հեռարձակվում են հայերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ ձայնային կամ լուսագրային եղանակով: Հարկ է նշել, որ հանրային հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնություններին երաշխավորվում է շաբաթական մեկ ժամ եթեր, իսկ հանրային ռադիոյով օրեկան մեկ ժամ:

75. Հայաստանի Հանրապետության Հեռահաղորդակցության մասին օրենքի 8-րդ հոդվածը ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռահաղորդակցության օպերատորների կողմից ընդունվող և հաղորդվող գրավոր հաղորդագրությունների հասցեները ձևակերպվում են հայերենով, իսկ տեքստը, տեխնիկական հնարավորության դեպքում, ցանկացած լեզվով և այբուբենի տառերով: Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ուղարկվող հաղորդագրությունները, տեխնիկական հնարավորությունների դեպքում, ձևակերպվում են ցանկացած լեզվով և այբուբենի տառերով: Նշված օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է հեռահաղորդակցության բնագավառում գործունեության սկզբունքները.

ա/ հեռահաղորդակցության ծառայություններից օգտվողների իրավունքների հավասարություն

բ/ հեռահաղորդակցության ցանցերով և տեխնիկական միջոցներով հաղորդումների փոխանցման ազատության և գաղտնիության ապահովում

գ/ հեռահաղորդակցության ցանցերի և տեխնիկական միջոցների, ռադիոհաճախության տիրույթի և հեռահաղորդակցության արբանյակների ուղեծրային դիրքերի պետական պաշտպանություն:

76. Տպագիր մամուլի կտրվածքում նշենք այն, որ Հայաստանում ռուսերեն լեզվով հրատարակվում են 10 թերթ և ամսագիր: Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների մինչև 1999 թ. ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված են եղել ազգային փոքրամասնությունների հետևյալ լրատվամիջոցները (թերթեր և հերթական հրատարակություններ)՝

1. «Ռուսսկիյ դոմ»-թերթը (Ռուսիյա համայնք)
2. «Դնիպրո» շաբաթաթերթը (ուկրաինական բարեգործական ֆոնդը)
3. «Ռիա Տազա» թերթը (քրդական համայնքը)
4. «Քրդերի ձայն» թերթը (եզդիների ազգային միություն)
5. «Բարեկամություն» ամսագիրը (հայ-քրդական բարեկամության հասարակություն)
6. «Բոտան» շաբաթաթերթը (Քրդստանի կոմիտե)
7. «Շանգալ» (եզդիների ազգային համայնք)

8. «Սինճար» 15-օրյա թերթը (քուրդ-եզդիական բարեկամության համայնք)
9. «Կոհելետ» (հրեական համայնք)
10. «Պանագիա» ամսաթերթը

Ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված են ազգային փոքրամասնությունների հետևյալ լրատվության միջոցները՝

1. «Դնիպրո-Սլավուտիչ» շաբաթաթերթը («Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա, հիմնադրվել է 12.02.2001)
2. «Կոհելետ» պաշտոնաթերթ (Հայաստանի հրական կրոնական համայնք, հիմնադրվել է 25.12.2000)
3. «Լալըշ» թերթ («Եզդիների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպություն, գրանցվել է 19.12.2000)

77. Հայաստանում այսօրվա դրությամբ գործում են 1116 զանգվածային լրատվության միջոցներ, այդ թվում՝ 193 հեռուստատեսային ընկերություններ, 55 ռադիոընկերություններ:

78. Ռադիոյով եթեր են հեռարձակվում քրդերեն, եզդիերեն, ռուսերեն, վրացերեն լեզուներով ռադիոհաղորդումներ: Խառը ամուսնությունների ներկայացուցիչներին տրամադրվում է հնարավորություն լսելու ռադիոհաղորդումներ ադրբեջաներեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Հաշվի առնելով Իրանի հետ առևտրատնտեսական կապերի ակտիվությունը կավելացվի պարսկերեն լեզվով ռադիոհաղորդումների տևողությունը:

ՀՈԴՎԱԾ 10

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ, անձնական կյանքում և հասարակական վայրերում, իր փոքրամասնության լեզվից, բանավոր և գրավոր, անարգել օգտվելու իրավունք ունի:

2. Ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում, եթե այդ անձինք խնդրել են, և այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապատասխանում է իրական կարիքներին, Կողմերը, որքանով որ հնարավոր է, պետք է ձգտեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց և վարչական իշխանությունների միջև հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը, ամենակարճ ժամկետներում, իրեն հասկանալի լեզվով, տեղեկություն ստանալ իր ձերբակալության պատճառների, իր դեմ հարուցված մեղադրանքների բնույթի և պատճառների մասին, ինչպես նաև իր պաշտպանությունը իրականացնել այդ լեզվով, դրա համար անհրաժեշտության դեպքում ստանալով թարգմանչի անվճար ծառայություն:

79. Համաձայն Հայաստանի Հանրապետության լեզվի մասին օրենքի Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Սա ինչպես նշել էինք զեկույցի նախորդ մասերում չի հանդիսանում խտրականության միջոց, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37 հոդվածը այս առումով երաշխավորում է ազգային փոքրամասնությունների իրավունքը պահպանելու, զարգացնելու անարգել իրենց մշակութային ավանդույթները, լեզուն և այլն:

80. Ինչ վերաբերում է զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում վարչական իշխանությունների հետ իրենց հարաբերություններում փոքրամասնության լեզուն օգտագործելուն, ապա նման իրական կարիքների առկայության դեպքում հնարավոր է այդպիսի պայմանների ստեղծումը, բայց քանի որ ազգային փոքրամասնությունների մեծամասնությունը ազատորեն տիրապետում է հայերենին, ուստի և նման պրոբլեմի առաջ Հայաստանի իշխանությունները առայսօր չեն կանգնել:

81. Անձի քրեադատավարական երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Նա կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված

կարգով: Սահմանադրության 40 հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցուցաբերվում է անվճար: Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունք:

82. Քրեական դատավարության օրենսգրքի 130 հոդվածի համաձայն ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 96 ժամից ավելի, որի ընթացքում պետք է նրան մեղադրանք առաջադրվի: 136 հոդվածի 3 կետի համաձայն քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին կամ մեղադրյալին հայտարարում է խափանման միջոց կիրառելու մասին իր որոշումը և անմիջականորեն նրան է հանձնում որոշման պատճենը: 203 հոդվածին համաձայն մեղադրանքը պետք է առաջադրվի տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կողմից որոշումն ընդունելու պահից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, սակայն բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մեղադրյալի ներկայանալու կամ նրան բերման ենթարկելու օրը: Քննիչը հավաստիանալով մեղադրյալի ինքնության մեջ, նրան հայտարարում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և բացատրում առաջադրված մեղադրանքի էությունը:

83. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր մասի 15 հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն: Քրեական դատավարության ընթացքում յուրաքանչյուր ոք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է: Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական դատավարության լեզվին չտիրապետող քրեական դատավարությանը մասնակցող անձանց անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց բոլոր իրավունքները: Քրեական դատավարության լեզվին չտիրապետող համապատասխան անձանց տրվում է օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեներն այն լեզվով, որին նրանք տիրապետում են: Եվ վերջում նշվում է, որ այլ լեզվով փաստաթղթերը քրեական գործին կցվում են դրանց հայերեն թարգմանությունների հետ միասին:

ՀՈԴՎԱԾ 11

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ ունի իր անունը, ազգանունը և հայրանունը փոքրամասնության լեզվով օգտագործելու, ինչպես նաև դրանց պաշտոնական ճանաչման իրավունք՝ տվյալ երկրի իրավական պահանջներին համապատասխան:

2. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ, իր փոքրամասնության լեզվով, հասարակության համար տեսանելի, մասնավոր բնույթի նշումներ, գրություններ և այլ տեղեկատվություն տեղադրելու իրավունք ունի:

3. Ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդապես բնակեցված տարածքներում, Կողմերը, իրենց իրավական համակարգերի շրջանակներում, անհրաժեշտության դեպքում նաև ներառյալ այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերը, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով, ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

84. Համաձայն Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 58 հոդվածի երեխային անուն է տրվում ծնողների համաձայնությամբ, հայրանուն է տրվում հոր անունով, իսկ սույն օրենսգրքի 57 հոդվածով նախատեսված դեպքերում՝ որպես հայր գրանցված անձի անունով: Իսկ 59 հոդվածի դրույթներով երեխաների ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Երբ ծնողները տարբեր ազգանուններ ունեն, երեխային տրվում է մոր կամ հոր ազգանունը ծնողների համաձայնությամբ, իսկ համաձայնություն չլինելու դեպքում՝ խնամակալական և հոգեբարձուական մարմինների ցուցումով:

85. Ներպետական օրենսդրությունը նախատեսում է անհատի կողմից անունը, ազգանունը և հայրանունը պահպանելու կամ փոխելու, կամ նախկին անունը, ազգանունը և հայրանունը վերականգնելու հնարավորությունը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքի 22-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացին իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում ու իրականացնում իր անվամբ, որ ներառում է նրա ազգանունը և անունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը: Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ քաղաքացին կարող է օգտագործել կեղծ անուն (մտացածին անուն): Քաղաքացին իրավունք ունի օրենքով սահմանված կարգով փոխել իր անունը: Անունը փոխած քաղաքացին իրավունք ունի պահանջել, որպեսզի իր հաշվին համապատասխան փոփոխություններ մտցվեն իր նախկին անվամբ ձևակերպված փաստաթղթերում: Ծննդյան ժամանակ քաղաքացու ստացած անունը, ինչպես նաև նրա անվան փոփոխությունը ենթակա են գրանցման՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար սահմանված կարգով: Այնուհետև

սահմանվում է, որ այլ անձի անվամբ իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել չի թույլատրվում:

86. Հայաստանում գործում է գովազդի մասին օրենք (ապրիլի 30, 1996 թ.): Հայաստանի Հանրապետության գովազդի լեզուն հայերենն է: Անհրաժեշտության դեպքում, որպես լրացում, գովազդատուի շարադրանքը կարող է զուգորդվել նաև այլ լեզուներով՝ համեմատաբար փոքր տառերով: Սույն դրույթը չի տարածվում տպագրվող թերթերի, հատուկ հրատարակությունների, ապրանքանիշերի և մակնիշների վրա: Գովազդի հայերեն շարադարանքը տեղեկատվության ծավալով չպետք է զիջի այլ լեզվով հրատարակվող տարբերակին: Հոդված 8-ում նշվում է, որ արգելվում է այն գովազդը, որում խախտվում է գովազդի պատշաճությունը, այն է՝

ա) վարկաբեկում է բարոյականության համընդհանուր և ազգային նորմերը

բ) պարունակում է ռասային, ազգությանը, մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը, տարիքային խմբին կամ սեռին, լեզվին, կրոնական կամ այլ համոզմունքներին վերաբերող վիրավորական արտահայտություններ, համեմատություններ և պատկերներ և այն:

Արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով: Արտաքին գովազդի ծավալը, քանակությունը և տեղաբաշխման կարգը որոշում է տեղական ինքնակառավարման մարմինները:

87. Ինչ վերաբերում է ավանդական տեղական անվանումներին, փողոցների անվանումներին, ապա նման իրավասություն, համաձայն ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենքի 12 հոդվածի 9 կետի, ունի համայնքի ավագանին, որտեղ նշվում է, որ ավագանին համաձայնություն է տալիս համայնքի փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային, այլ ձեռնարկությունների ու կազմակերպությունների անվանմանը և վերանվանմանը, տների, շենքերի և այլ շինությունների համարակալմանը: Իսկ համայնքի ղեկավարը անվանում և վերանվանում է համայնքի փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային, այլ ձեռնարկություններն ու կազմակերպությունները: Հայաստանի Հանրապետության մեկ այլ՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքի 5 հոդվածը սահմանում է, որ մեկ բնակավայր ընդգրկող համայնքին տրվում է այդ բնակավայրի անվանումը, 2 և ավելի բնակավայր ընդգրկող համայնքին՝ առավել բնակչություն ունեցող բնակավայրի անվանումը:

Իսկ 6-րդ հոդվածը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման փոփոխումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության մարզային բաժանման, մարզերի սահմանների, վարչական կենտրոնների, համայնքների, թաղային համայնքների, բնակավայրերի և թաղամասերի տարածքների սահմանների փոփոխումը, նոր համայնքների ստեղծումը կամ նոր բնակավայրերի հիմնումը, բնակավայրերի դասակարգման

փոփոխումը, ինչպես նաև մարզերի, բնակավայրերի, թաղամասերի, համայնքների և թաղային համայնքների անվանումներն ու վերանվանումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ սույն օրենքի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով: Այնուհետև նշվում է, որ բնակավայրերի վերանվանումները կատարվում են միայն պատմական անվանումները վերականգնելու, օտար, ոչ բարեհունչ և կրկնվող անվանումները վերացնելու նպատակով՝ հաշվի առնելով բնակավայրի բնակչության կարծիքը:

ՀՈԴՎԱԾ 12

1. Կողմերը, անհրաժեշտության դեպքում, կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում, պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար:

2. Այս կոնտեքստում, Կողմերը, մասնավորապես պետք է ադեկվատ հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

3. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, բոլոր մակարդակներով, ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ:

88. Կրթության իրավունքը սոցիալ տնտեսական իրավունքների շարքում զբաղեցնում է կարևորագույն տեղ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37 հոդվածը կոնկրետ մատնանշում է սույն կոնվենցիայի հոդված 12-ում ամրագրված իրավունքների երաշխավորվածությունը:

89. Սահմանադրության 35 հոդվածը նշում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: Ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

90. Գործում է Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենք, համաձայն որի, սահմանվում են կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպաիրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը:

91. Կրթության բնագավառում պետական քաղաքականության մասին խոսելիս՝ հիմնարար է այն դրույթը, որ Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

92. Ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից (կրթության մարդասիրական բնույթը, որոշակի ոլորտներում համապատասխան աշխարհայացքի ձևավորումը, կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը, միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը, ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը, ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը, և վերջապես կրթության մատչելիությունը, շարունակականությունը և այլն), Հայաստանի Հանրապետությունը ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով: Պետությունը նպաստում է նաև, որ կրթական գործունեությանը մասնակիցի սփյուռքահայությունը:

93. Կրթության մասին օրենքով մանրամասն սահմանվում է Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը, պետական կրթական չափորոշիչները, կրթական ծրագրերը և ձևերը, ուսումնական հաստատությունների տիպերը, կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները:

94. Եթե հաշվի առնենք նախադպրոցական կրթության հիմնական խնդիրները, ապա կնկատենք, որ նրանց շարքում ամրագրված է հետևյալը՝ մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովում:

95. Պետական ուսումնական հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության կամ պետական համապատասխան լիազորված մարմնի: Համայնքային ուսումնական հաստատության հիմնադիրը համայնքն է՝ ի դեմս համայնքի ինքնակառավարման մարմնի: Ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք: Պետական ուսումնական հաստատություններն ստեղծվում են դրանց կանոնադրությունները հիմնադրի կողմից հաստատվելու պահից, իսկ ոչ պետական ուսումնական հաստատություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ: Այդ ուսումնական հաստատությունները ստեղծված են համարվում օրենքով սահմանված կարգով՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնում գրանցման պահից:

96. Անդրադառնալով կրթության համակարգի կառավարման հարցերին, տվյալ պահին մեզ հետաքրքրող ուսումնական հաստատությունների մանկավարժական և ղեկավար կադրերի որակավորման կարգին, ապա այդ հարցի ամբողջական կյանքի կոչելու պարտականությունը դրված է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի վրա:

97. Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններն իրավունք ունեն համագործակցել ուսումնական, գիտական և այլ

կազմակերպությունների հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

98. Ներկա պայմաններում կրթության համակարգի տարբեր աստիճաններում սովորում են 674000 մարդուց ավելին, որի մեծամասնությունը սովորում է պետական ուսումնական հաստատություններում: Իսկ դա նշանակում է, որ բնակչության 20%- ից ավելին ներգրաված են կրթության համակարգում:

99. Վիճակագրության նախարարության տվյալներին համապատասխան (1998-1999թթ) նախադպրոցական հաստատությունների ընդհանուր թիվը հասնում է 856-ի, որոնցում սովորողների թիվը՝ 56604, դաստիարակների թիվը՝ 7785, իսկ պետական բյուջեից հատկացվող գումարը 22,7 մլն դրամ, միջնակարգ դպրոցների թիվը՝ 1459, որոնցում սովորողները կազմում են 603100, իսկ ուսուցիչների թվաքանակը՝ 63000: Այս ոլորտին բյուջեից հատկացվող դրամաքանակը կազմում է 10326,1 մլն դրամ: Ոչ պետական ուսումնական հաստատությունների թիվը կազմում է 26, նրանում սովորողներինը՝ 1590: Մասնագիտական տեխնիկական ուսումնական հաստատությունների թիվը կազմում է 65, նրանում սովորողների թիվը՝ 4200, ուսուցիչների թիվը՝ 1809, իսկ բյուջեից այս ոլորտին հատկացվող գումարը կազմում է 476,2 մլն դրամ և այլն:

100. Հայաստանում են սովորում նաև 1039 օտարերկրյա ուսանողներ: 1999 թվականին բուհեր են ընդունվել 307 օտարերկրացիներ, որոնց 39 %-ը կազմում են կանայք:

101. Ուսուցման լեզվի 98.1 %-ը հայերենն է, ուսանողների 1.7 %-ը ստանում են ռուսական կրթություն, իսկ 0.2 %-ը այլ լեզուներով:

102. Լեզվի մասին օրենքով (17.04.93թ.) նախատեսված է, որ ազգային փոքրամասնությունների համայնքներում ընդհանուր կրթությունը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով պետական ծրագրերով և պետության հովանավորությամբ հայերենի պարտադիր ուսուցմամբ: Իսկ այդ օրենքի հոդված առաջինը հռչակում է, որ «Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է իր տարածքում ազգային փոքրամասնությունների կողմից իրենց լեզվով ազատ օգտագործումը»:

103. Բացի հայկական ընդհանուր միջնակարգ դպրոցներից, Հայաստանում այժմ գործում է 3 ռուսական դպրոց, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը: Նշված դպրոցների մեծամասնությունում դասավանդվում է ռուսերեն: Բացի այդ 12 դպրոցներում կա ռուսերեն ուսուցման սեկտոր: Այն շրջաններում, որտեղ քրդերի թիվը բավականին շատ է որոշ դասարաններում դասավանդվում է քրդերեն լեզու: Թիվ 74 միջնակարգ դպրոցում Երևանի դասավանդվում է հույներեն, իսկ թիվ 8 դպրոցում ասորերեն: Դպրոցներում դասավանդվող օտար լեզուներից կարելի է առանձնացնել գերմաներենը, անգլերենը, ֆրանսերենը,

իսպաներենը, արաբերենը և պարսկերենը: ԵՊՀ-ում արևելագիտական ֆակուլտետում գործում են թուրքերեն և պարսկերեն բաժինները:

ՀՈԴՎԱԾ 13

1. Իրենց կրթական համակարգերի շրջանակներում, Կողմերը պետք է ճանաչեն, որ ազգային փոքրամասնության պատկանող անձիք իրավունք ունեն ստեղծել և ղեկավարել իրենց սեփական մասնավոր կրթական և վերապատրաստման հաստատությունները:

2. Այս իրավունքի իրագործումը Կողմերի վրա ոչ մի ֆինանսական պարտավորություններ չի դնում:

104. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35 հոդվածում հիշատակվում է, որ Հայաստանի Հանրապետությունում մասնավոր ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով՝ կրթության մասին օրենքով: Ինչպես արդեն զեկույցի նախորդ հոդվածում նշեցինք ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձև: Ոչ պետական ուսումնական հաստատությունները ստեղծվում են դրանց հիմնադրի որոշմամբ և կրթության պետական կառավարման լիազորված մարմնում գրանցման պահից: Ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք: Ոչ պետական ուսումնական հաստատությունները ի տարբերություն պետականի, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը կրթական գործունեություն իրականացնելու իրավունք են ձեռք բերում լիցենզիա ստանալու պահից, եթե ապահովված են կրթական գործունեության լիցենզավորման մի շարք պահանջներ: Այսպես օրինակ՝ հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմ, լաբորատոր բազա և ուսումնական տարածք, ուսումնամեթոդաբանական ապահովում, գրադարանային-տեղեկատվական համակարգ և այլն: Կրթական գործունեության լիցենզիան տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ փորձաքննության արդյունքների հիման վրա, իսկ լիցենզավորման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 14

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորելու իր փոքրամասնության լեզուն:

2. Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում, բավարար կարիքի դեպքում, Կողմերը, հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում, պետք է երաշխավորեն, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու ադեկվատ հնարավորություններ:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթները չպետք է իրագործվեն ի վնաս պաշտոնական լեզվի ուսուցմանը և դասավանդմանը:

105. Փոքրամասնությունների լեզվական ինքնակենցաղության պահպանման և զարգացման համար հնարավորության ստեղծմանն է ուղված ազգային փոքրամասնությունների անդամների իրավունքը սովորելու իրենց մայրենի լեզուն: Այս դրույթը նախատեսված է «Լեզվի մասին» ՀՀ օրենքով:

106. Համաձայն կրթության և գիտության նախարարության տրամադրած տվյալների Երևան քաղաքի դպրոցներում ուսումնասիրվում են մի քանի օտար լեզուներ: Այսպես օրինակ, Երևանի թիվ 62, 88 դպրոցներում օտար լեզուներից ուսումնասիրվում են ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, իսկ 106, 133, 134, 141, 163, 186, 90, 91105, 116, 152 և այլ դպրոցներում՝ ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն: Երևանի թիվ 89 դպրոցում բացի ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, լեզուներից ուսումնասիրվում է նաև վրացերեն: Երևանի թիվ 74 դպրոցում օտար լեզուներից ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուների հետ մեկտեղ ուսումնասիրվում է նաև հունարեն, իսկ թիվ 173 և 129 դպրոցներում՝ արաբերեն: Երևանի թիվ 78 և 59 դպրոցներում ուսումնասիրվում են հետևյալ օտար լեզուները՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և պարսկերեն, իսկ թիվ 83 դպրոցում՝ ռուսերեն, անգլերեն և իտալերեն: Երևանի թիվ 149 դպրոցում ուսումնասիրվում են հետևյալ օտար լեզուները՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, պարսկերեն և իսպաներեն:

ՀՈԴՎԱԾ 15

1. Կողմերը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, հասարակական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում, ապահովելու համար:

107. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մշակութային կյանքին արդյունավետ մասնակցության վերաբերյալ տես հոդված 6 (48-63 կետեր).

108. Պրոբլեմներից շատերը ազգային փոքրամասնությունների իրավունքների իրականացման ոլորտում պայմանավորված է միայն ծանր տնտեսական դրությամբ, որը լիովին թույլ չի տալիս հաշվի առնել նրանց պահանջմունքները սոցիալական ոլորտում, աշխատանքային զբաղվածության, մշակույթի, կրթության և առողջապահության ոլորտներում, որտեղ և կենտրոնացած են ազգային փոքրամասնությունների հիմնական շահերը: Բացի այդ ազգային փոքրամասնությունների մասին օրենքի նախագծով նախատեսված են ազգային փոքրամասնությունների քաղաքական, տնտեսական, սոցիալական, դատական, էթնիկական, լեզվական, մշակութային և խղճի, մտքի և դավանանքի իրավունքներ, կրթության իրավունքի ապահովում և այլն, նախատեսված են նաև նորմեր, որոնք երաշխավորվում են նրանց իրավունքը մասնակցելու պետության կառավարմանը: Այդ նպատակով կառավարության կառուցվածքում պետք է ստեղծվի ազգային փոքրամասնությունների հարցերի գծով վարչություն:

109. Այժմ փոփոխություններ են նախապատրաստվում ինչպես ընտրական օրենքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում: Անհրաժեշտություն է նաև այն, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ներգրավվեն կառավարական, դատական և դատական ու տեղական վարչական կառույցների աշխատանքներին: Այսօր ազգային փոքրամասնությունների մոտ 15 ներկայացուցիչներ զբաղեցնում են գյուղական վայրերում, տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոններ: Նախատեսվում է, որ շուտով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կձևավորվեն կոմիտեներ և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ: Ազգային փոքրամասնության ներկայացուցիչներից կարող են հասարակական հիմունքներով ստեղծվել նաև խորհրդատվական ծառայություններ, որոնց ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է համապատասխան մարմինների կողմից:

110. 1999 թվականին փետրվարի 17-ին ընդունվել է ընտրական օրենսգիրքը: Համաձայն ՀՀ Սահմանադրության ՀՀ քաղաքացիները ունեն ընտրական իրավունք, անկախ ազգային, ռասայական, սեռական, լեզվական պատկանելությունից, հավատքից, քաղաքական կամ այլ

համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք: Ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակումները շարադրված սկզբունքների առումով հետապնդվում է օրենքով:

ՀՈԴՎԱԾ 16

1. Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով և նպատակ ունեն սահմանափակել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքները և ազատությունները:

111. Հայաստանում վերջին ժամանակներս նման տարածքային փոփոխություններ չեն արձանագրվել, որոնք կտեղաշարժեին բնակչության կառուցվածքային կազմը: «ՀՀ Վարչատարածքային բաժանման մասին» օրենքը հաշվի է առել ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ էթնիկական, լեզվական և այլ առանձնահատկությունները բաժանումն իրագործելիս:

ՀՈԴՎԱԾ 17

1.Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքը՝ հաստատել և պահպանել ազատ և խաղաղ միջսահմանային շփումներ այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ, մասնավորապես նրանց հետ, ովքեր ունեն ընդհանուր էթնիկական ինքնություն, լեզվական, կրոնական կամ մշակութային ընդհանուր ժառանգություն:

2. Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ ոչ-կառավարական կազմակերպությունների գործունեությանը, ազգային և միջազգային մակարդակներով, մասնակցելու իրավունքը:

112. Ներկայումս իր 4 հարևաններից միայն 2-ի (Վրաստան և Իրան), հետ է որ հնարավոր է միջսահմանային համագործակցություն:

113. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների պաշտպանության մասին ԱՊՀ կոնվենցիան սահմանում է, որ «Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պարտավորվում է ապահովել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար իրավունք անխոչընդոտ կերպով շփումներ հաստատելու իրենց միջև, ինչպես նաև կապեր սահմանելու իրավունքը քաղաքացիների և պետությունների կազմակերպությունների հետ, որոնց հետ նրանք ունեն ընդհանուր էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական համոզմունքների ծագում»:

114. Ազգային փոքրամասնությունների շփման իրավունքը, այդ թվում նաև անդրսահմանային, ենթադրում է պետության պարտականությունը չխոչնդոտել նման շփումներին և չհետապնդել այդ անձանց՝ այնքանով, որ պետությունը չմիջամտի այդ իրավունքի իրականացման գործում: Այս իրավունքի իրականացումը կարող է սահամանափակվել միայն այն դեպքերում, որոնք նախատեսված են օրենքով և համապատասխանում են միջազգային ստանդարտներին:

115. Հիշյալ կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է ազգային փոքրամասնությունների խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկվելու իրավունքը: Այնուամենայնիվ հետևում է նշել, որ ազգային փոքրամասնությունների քննարկվող իրավունքը կապված է շրջանակային կոնվենցիայի 17 հոդվածի 2 կետի հետ, որը սահմանում է. «Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանը, ազգային և միջազգային մակարդակներով, մասնակցելու իրավունքը»: Ինչպես մնացած իրավունքները, այնպես էլ հիշյալ իրավունքը ենթադրում է պետության համապատասխան պարտականություններ: Առաջին հերթին այդպիսին է հանդիսանում պետության պարտականությունը ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել փոքրամասնությունների միությունները, ինչպես նաև տրամադրել նրանց ձևական և փաստական հնարավորություն իրենց կանոնադրական խնդիրների իրականացման համար: Սրանց հետ

միաժամանակ պետությունները կարող են սահմանել որոշակի արտոնություններ կամ ուղղակի օգնություն փոքրամասնությունների միություններին: Հայաստանի Հանրապետությունը այդպիսի հնարավորություն արդեն իսկ տրամադրել է ազգային օրենսդրությամբ և որևիցե խոչընդոտ նշված իրավունքի իրականացման հարցում չի կարող առաջանալ: Հայաստանի Հանրապետության 2000 թվականի պետբյուջեով ազգային փոքրամասնությունների գծով նախատեսվել էր 10 մլն. դրամ, նույնչափ սահմանվել է նաև 2001 թվականի պետական բյուջեով:

ՀՈԴՎԱԾ 18

1. Համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար, Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է ջանք գործադրեն, այլ պետությունների, մասնավորապես, հարևան երկրների հետ, երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար:

2.Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է միջոցներ ձեռնարկեն միջսահմանային համագործակցությունը խրախուսելու համար:

116. Հայաստանի Հանրապետությունը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար այլ պետությունների, մասնավորապես հարևան երկրների հետ կնքել է երկկողմ (Բարեկամության և համագործակցության մասին) և բազմակողմ համաձայնագրեր:

117. Հիշյալ երկկողմ Բարեկամության և համագործակցության մասին պայմանագրերում արծարծվում են այնպիսի հիմնադրույթներ, որոնք վերաբերում են անմիջականորեն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը: Այսպես օրինակ, Ռուսաստանի Դաշնության հետ Բարեկամության և համագործակցության մասին պայմանագրի 8 հոդվածը, Հունաստանի հետ՝ 20 հոդվածը, Ռումինիայի հետ՝ 14 հոդվածը, Բուլղարիայի հետ՝ 9 հոդվածը, Ղազախստանի հետ՝ 5 հոդվածը, Լիբանանի հետ՝ 8 հոդվածը, Ուկրաինայի հետ՝ 5, 6 հոդվածները ամրագրում են կոնկրետ դրույթներ, որոնք վերաբերում են համապատասխանաբար 2 պետություններում բնակվող ազգային փոքրամասնությունների էթնիկական, մշակութային, կրոնական ինքնության պահպանման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը և համապատասխան միջոցառումների իրականացմանը:

118. Վերոհիշյալ պայմանագրերով հաշվի են առնվում 2 ժողովուրդների միջև պատմության ընթացքում հաստատված առանձնահատուկ ավանդական բարեկամական հարաբերությունները և բազմաբնույթ կապերը, գիտակցելով մի շարք պարտավորությունների կարևորությունը, որոնք ստանձնել են միջազգային մի շարք փաստաթղթերով, պետությունները պարտավորվում են բարեկամության և փոխադարձ վստահության ոգով համագործակցել բոլոր բնագավառներում, ըստ անհրաժեշտության կնքել այլ համաձայանագրեր:

119. Հայաստանի Հանրապետությունը իր անմիջական հարևան Վրաստանի հետ 1993 թվականի մայիսի 19-ին կնքել է բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագիր: Հիշյալ պայմանագրի 7-րդ հոդվածը սահմանում է. «Բարձր Պայմանավորվող Կողմերը հավաստում են, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հարգումը, ինչպես նաև նրանց կողմից պետության նկատմամբ իրենց պարտավորությունների կատարումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում և Վրաստանի Հանրապետությունում

խաղաղության, արդարության, կայունության և ժողովրդավարության էական գործոն»:

120. Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև կնքված Բարեկամության և համագործակցության մասին պայմանագիրը զարգացնելով համագործակցության մի շարք ոլորտներում հարաբերությունները՝ (20-րդ հոդված) ուղղակիորեն ամրագրում է. «Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը երաշխավորում են անհրաժեշտ պայմանների ստեղծում և համապատասխան միջոցառումների իրագործում՝ Հունաստանի Հանրապետությունում բնակվող ազգությամբ հայ և Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգությամբ հույն քաղաքացիների էթնիկական, մշակութային և կրոնական ինքնության պահպանման և զարգացման համար, միջազգային նորմերին համապատասխան: Կողմերը պետական մակարդակով աջակցում են հունահայ համայնքի և հայաստանաբնակ հունական համայնքի հասարակական, հոգևոր, մշակութային, կրթական, մարզական և բարեգործական գործունեությանը»:

ՀՈԴՎԱԾ 19

Կողմերը պարտավորվում են հարգել և կիրառել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքները, անհրաժեշտության դեպքում, կատարելով միայն այնպիսի սահմանափակումներ և բացառություններ, որոնք նախատեսված են միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում, այնքանով, որքանով որ դրանք վերաբերում են նշված սկզբունքներից բխող իրավունքներին և ազատություններին:

121. Հայաստանի Հանրապետությունը, համաձայն միջազգային իրավունքի կարևորագույն սկզբունքին՝ պարտավորությունների բարեխիղճ կատարում, ելնում է այն կանխավարկածից, որ սույն կոնվենցիայի սկզբունքները և դրույթները պարտավոր են արժանանալ հարգանքի և կիրառման, անհրաժեշտության դեպքում, կատարելով միայն այնպիսի սահմանափակումներ և բացառություններ, որոնք նախատեսված են միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում:

122. ՀՀ Սահմանադրության 44 և 45 հոդվածներով նախատեսված է այն իրավունքների շրջանակը և պայմանները, որոնց առկայության դեպքում կարող են դրանք սահմանափակվել: Հայաստանում նմանօրինակ իրադրություն է ծառայել 1996 թվականի սեպտեմբերի 26-ի դեպքերը, որի ժամանակ ՀՀ նախագահը, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, իրականացրել է ՀՀ սահմանադրության 55 հոդվածի 14 կետով նախատեսված գործողություններ, որից հետո համաձայն սահմանադրության 45 հոդվածի սահմանափակվել են ժամանակավորապես մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատություններ, բացառությամբ սահմանադրության 17, 19, 20, 39, 41-43 հոդվածների: Այս իրողությունը կարևորում է այն փաստը, որ, թեկուզև, կիրառվել է որոշակի իրավունքների սահամանափակումներ, այնուամենայնիվ դրանք իրականացվել են օրենքի շրջանակներում և միջազգային ստանդարտներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 20

Սույն շրջանակային կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքների և ազատությունների իրագործման ժամանակ, ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ պետք է հարգի ազգային օրենսդրությունը և մյուսների իրավունքները, մասնավորապես, բնակչության մեծամասնության և այլ ազգային փոքրամասնությունների իրավունքները:

123. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48 հոդվածը սահմանում է յուրաքանչյուր անձի պարտականությունը պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները՝ արժանապատվությունը: Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգի բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն և պատերազմ քարոզելու նպատակով:

Հոդված 23

Սույն շրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքներից բխող ազատությունները և իրավունքները, այնքանով, որքանով որ համընկնում են «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի կամ դրա Արձանագրությունների առարկա, պետք է հասկացվեն որպես վերջինիս համապատասխան դրույթներ:

124. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ազգային փոքրամասնությունների իրավունքները և ազատությունները դիտարկվում են ընդհանրապես մարդու իրավունքների և ազատությունների համատեքստում: Ազգային փոքրամասնությունների իրավունքները պետք է ընկալվի որպես այդպիսին, որը կամրապնդի ՀՀ համար ուժի մեջ մտնելիք մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի և դրա արձանագրությունների համապատասխան դրույթները:

ՀՈԴՎԱԾ 30

1.Յուրաքանչյուր պետություն վավերացման, ընդունման և միանալու փաստաթուղթը ստորագրման կամ ի պահ հանձնելու պահին կարող է նշել տարածքը կամ տարածքները, որոնց սահմաններում նա պատասխանատվություն է կրում միջազգային հարաբերությունների և սույն կոնվենցիայի կիրառման համար:

2.Յուրաքանչյուր պետություն կարող է հետագայում ցանկացած պահի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի անունով դիմումի մեջ տարածել սույն շրջանակային կոնվենցիայի կիրառումը որևէ ուրիշ, դիմումի մեջ նշված, տարածքի վրա: Այս տարածքների վերաբերյալ սույն կոնվենցիան ուժի մեջ կմտնի այդ դիմումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3.Ցանկացած դիմում, արված երկու նախորդ կետերի դրույթների հիման վրա, կարող է հետ կանչվել ցանակացած տարածքի վերաբերյալ, նշված այդպիսի դիմումի մեջ՝ Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով: Այդպիսի հետկանչումը ուժի մեջ մտնում Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցագիրը ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

125. Հայաստանի Հանրապետությունը չունի նման տարածք: Հայաստանի Հանրապետությունը որևէ հայտարարություն չի արել կապված շրջանակային կոնվենցիայի տարածքային կիրառման հետ, երբ վավերացրեց շրջանակային կոնվենցիան: Ուստի կոնվենցիան կիրառվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի նկատմամբ: